ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 06

«ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան, Աբովյան 27 « 12 » ապրիլի 2021թ.

Ժամը 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Բաբայան ԳՊ/ԳԱՊ

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Նահապետյան ԳՊ/ԳԱ, Գ. Սահակյան ԳՊ/ԳԱ,

Ն. Սարգսյան ԳՊ/ԲԱ, Հ. Մինասյան ԳՊ/ԲԱ

Գնումները համակարգող՝ Ա. Մնացականյան

Գնահատող հանձնաժողովի կողմից նիստը կասեցնելու վերաբերյալ

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/19 որոշումը, որը հրապարակվել է 09.04.2021 թ-ին, գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1/ դադարեցնել «Տեխնոֆորում» ՍՊԸ-ի հետ «ՀԿ-ԳՀԱՊՁԲ-21/02» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը,

2/ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը՝ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ին հնարավորություն տալ շտկել անհամապատասխանությունը տեխնիկական բնութագրի մասով, համաձայն ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 41-րդ կետի:

Հարկ է նշել, որ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի Հավելված 1.1-ով գնվող ապրանքի ամբողջական նկարագրի 7-րդ չափաբաժնի մասով պահանջ է եղել, որ մատակարար Ընկերությունն առաջարկվող ապրանքներին կից պարտավոր է ներկայացնել արտադրող Ընկերության կողմից տրամադրվող MAF հավաստագիր, մինչդեռ «Գլավսնաբ Իմպորտ» ՍՊ Ընկերությունը իր կողմից հայտով ներկայացվող Հավելված 1.1-ով հրաժարվել է ներկայացնել MAF հավաստագիր, պատճառաբանելով, որ այն օրենքին անհամապատասխան է:

ՀՀ կառավարության N 526-Ն որոշման 42-րդ կետով սահմանվում է, որ եթե սույն որոշման 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ _____ Վ. Բաբայան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ա. Նահապետյան

_____ Գ. Սահակյան

_____ Ն. Սարգսյան

_____ Հ. Մինասյան

Գնումները համակարգող՝ _____ Ա. Մնացականյան